№ 46 ՄԱՐՏԻ 23 (ԱՊՐԻԼԻ 4) 1878 ՄԱՐՏԻ 23 (ԱՊՐԻԼԻ 4) № 46

ԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ. կէս տարվանը 6 ռուբլ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը և պ. Ծատուրեանի խանութում

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція „Мшакъ"

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մեր անտառները։ — Ներքին տեսութիւն։ Նամակ խմբագրին։ Ներքին լուրեր։ — Արտաքին տեսութիւն։ Աւստրիա։ Նամակ Թիւրքիայից։ Արտաքին լուրեր։ — «Մշակի» հեռագիրներ։ — Յայտարարութիւններ։ — Տեղեկացոյց։ — Բանասիրական։ Մի ամիս կաթնատնտեսական ուսումնարանում։

ՄԵՐ ԱՆՏԱՌՆԵՐԸ

III

Զևակերպենք մեր ասածները մեր լրագրի անցեալ համարներում։

Մեր երկրի ոչնչացող անտառները պահպանելու միջոցները սրբանք են։

Նախ և առաջ պէտք է մտցնել մեր անտառային վարչութեան մէջ Եւրոպայում ընդունված բնական և քաղաքատնտեսական ճիշդ գիտութիւնների վրա հիմնված տնտեսութեան մշակված սիստեմը և ենթարկել անտառների արդիւնքի գործածութիւնը խիստ կանոններին և վերահսկողութեանը։ Պէտք է զարգացնել նոր անտառները երկրի այնպիսի տեղերում, օրինակ սարերի զառիվայրների վրա, որտեղ չէ կարելի մոցնել մի որ և է այլ տնտեսութեան ձև։

Պէտք է խստութեամբ արգելել անտառների կամայական կերպով սպառելը, պէտք է խստութեամբ օրէնքի համեմատ պատժել առողջ և հասակ առած ծառերից ածուխ այրողներին, պէտք է պաժել կամայական և անխնայ կերպով փայտ կտրողներին, երբէք չը պէտք է թոյլ տալ խաշնարածներին և անասնապահներին արածել իրանց հօտերը անտառի նորահաս թուփերի և տունկերի մէջ, որպէս զի նոր անտառների աճումը և հասակը չարգելվի։

Բայց մի և նոյն ժամանակ անհրաժեշտ է ուշադրութիւն դարձնել այն կէտերի վրա որ մենք յիշեցինք մեր առաջին յօդուածում։

Տնտեսապէս անզարգացած հասարակութիւնների մէջ անտառը համարվում է մի այնպիսի ընդհանուր մատչելի և ձրիապէս գործածելի բնութեան բարիքը, ինչպէս օրինակ օդը և գետերի ջուրը։

Բայց իսկապէս այդպէս չէ։ Ջուրը և օդը չեն սպառվում, իսկ անտառը անխոհեմ, շռայլ և անխնայ գործածվելով սպառվում է և մի և նոյն ժամանակ պատճառ է լինում ջրերի պակասելուն և օդի վատանալուն։

Չէ կարելի իրաքանչիւր գիւղացուն թոյլ տալ անհաշիւ կտրել և սպառել անտառը, բայց անտառի արդիւնքի գործածութիւնը պէտք է կանոնաւորվի, սահմանվի անխախտ կանոնների մէջ և ենթարկվի ճիշդ մաթեմատիկական հաշիւին և օրինական խիստ կանոնրջին։

Ռուսաստանի ներքին նահանգներում, ինչպէս ասացինք, թագաւորական անտառներից փայտի դուրս տանելը, և վաճառելը աճուրդով է տրվում։ Հարուստ գումարատէրերից ով որ ամենամեծ գին է տալիս, նրան է մընում աճուրդը։ Հասկանալի է որ գումարատէրը մեծ գին ներկայացնելով չունի աչքի առջև ոչ տէրութեան շահերը, ոչ էլ երկրի և ժողովրդի օգուտները։ Նա միթէ ձեռք է տալիս անտառի էկսպլուատացիային, նա անում է այդ միայն այն նպատակով որ շահվի, հարստանայ։ Երբ այդ տեսակ գումարատէր հարստահարողների ձեռքը ընկնում է անտառի արդիւնքը, նրանք դառնում են մենավաճառ և ծախում են փայտը կամայական գներով։

Ցանկալի է որ այդ սիստեմը չը մոցնվի Անդրկովկասում, եթէ ոչ նա վերջին հարուած կը տայ մեր անտառների գոյութեանը։

Դորան առաջն առնելու համար մի միջոց կայ միայն։ Թող անտառային վարչութիւնը մշակի նոր և խիստ կանոններ և այդ կանոնների հիման վրա յանձնի անտառների էկսպլուատացիան ոչ թէ գումարատէրերին, թոյլ տայ իրաքանչիւր գիւղացուն անխնայ կտրել ծառերը, այլ յանձնի այդ էկսպլուատացիան գիւղական համայնքին, պահանջելով համանալով ծախում է կրկին կովկասցուն և այդ երկայն շրջանի մէջ փայտի գինը բացառիկ բարձրանում է հինգ կամ տասն անգամ։ — Ի հարկէ խնդիրը ընկուզենում չէ, այլ ամբողջ երևոյթի մէջ։

Այս և սրանց նման ուրիշ պատճառներ ազասում են և արգելում գործիքների բազմանալուն մեզանում, մինչդեռ գործիքների նշանակութիւնը և անհրաժեշտութիւնը օրից օր աւելանում է։ Առանց կատարելագործութիւնների, առանց մեքենաների միջամտութեան մեր նահապետական արդիւնաբերութեան մէջ, մեզ համար կանք չը կայ, մեզ համար վերականգնումն չը կայ մեր տընտեսական թշուառ ու նեղ դրութենից։ Շատ բան է միասին մեզ հարկաւոր. և հմտութիւն ու գիտութիւն և ցանկութիւն ու ձեռնարկութեան ոգի, և հարստութիւն ու զոհերի պատրաստականութիւն... Բոլոր յաջող հանգամանքները միասին մեզ համար անմտացածին և անհասանելի են. զոնէ եղած պայմաններում աշխատենք և գործենք կարելին չափ շրջահայեցողութեամբ։

Մեր գրվածքի ուղիղ նպատակից չեղվեցանք և շատ կանգ առինք մեքենաների վրա. դառնանք մեր խօսքի շարունակութեան։

Այն խնոցին, որ գործ է ածվում կաթնատնտեսական ուսումնարանում միանգամից տանում է 10 պուդ և աւելի սեր, խնոցին ունի մի փոքրիկ ծակ, որ տալիս է կարողութիւն իրաքանչիւր բոպէ նայել սերին և իւղահանութեան։ Իւղը երբ դառնում է ցորենահատի մեծութեան խնոցի մէջ, իսկոյն կանգնեցնում են մեքենան և իւղը ժողովում։ Իւղը առհասարակ ուղարկում են Պետերբուրգ, երբեմն քաղցր, երբեմն աղի։ Մեզանում կարագ իւղը աղած քիչ դեղին գործ ածում. իսկ դա Անգլիայում շատ տարածված է։ — Իւղը ամառը լինում է դեղնագոյն, իսկ ձմեռը սպիտակ։ Դեղին գոյնը, ինչպէս յայտնի է, կախված է կանաչ խոտից. ձմեռը կանաչ խոտ չը կայ և իւղին ամառվայ գեղեցիկ գոյնը տալու համար ներկում են օրինակ գազարի հիւթով կամ օրլեան անուանված ներկով։ Այդ ներկը ցվիլ չեն տալիս, կարագ իւղը դուրս է գալիս անուշահամ և աւելի դիմացկուն։

Կաթնատնտեսական ուսումնարանում փայտեայ մեծ խնոցին չոգեշարժ մեքենայով է բան անում։ Մեքենայի առանձին մասների կապերը այնպէս են շինված, որ կարելի է յարմարեցնել և ձիու (կամ եզան), այսինքն շինել ձիաշարժ մեքենայ։ Նոյնպէս պատրաստ իւղը ձեռքով չեն ճմլում, այլ մեքենայով և շատ տեղերում ամենեին լուանում էլ չեն ջրով. այլ միայն բաւականանում են թանից քամելով։

Մեքենաների և գործիքների վրա խօսելով այստեղ՝ չենք կարող աչքի չանցնել առհասարակ դրանց տեղը մեր կեանքի մէջ։ Մեքենաները մենք ստիպված ենք լինում առհասարակ բերել տալ Եւրոպայից՝ մեզ համար բաւականին թանգ գներով։ Մի որ և իցէ վնաս կամ խանգարումն պատահած ժամանակ, մենք կարողութիւն չենք ունենում ինքներս մեր երկրում եղած միջոցներով ուղղել, կարկատել և թանգ գնած մեքենան զուր տեղը տարիներով ընկնում է մի ամբարում։ Շատ անգամ ամենամեծ արգելքը նրանումն է լինում, որ ոչ մեքենայ բերել տվողը ինքը լաւ գիտէ մեքենայի շինվածքը և գործածութիւնը և ոչ այն մարդը, որ դրած է նրա հսկողութեան տակ։ — Ամենեքեան լաւ յիշում են մեքենաների մոդան, որ մի քանի տարի առաջ կար մեզանում. բերել էին տալիս բամբակ մաքրելու, ճրագու շինելու, թել մանելու, կտաւ գործելու մեքենաներ և այլ շատ ուրիշ գործիքներ, որ այժմ ըստ մեծի մասին մի անկիւնում ընկած փտում են։ Շատ անգամ լաւ չէին կշռում երկրի զանազան հանգամանքները, պահանջը, յարմարութիւնը. բաղդի բերմունքին և աջողութեան էին միայն յոյս դնում։ Օրինակ, ինչ նշանակութիւն կարող էր ունենալ ճրագու պատրաստելու մեքենան Բագում, ուր այնքան զանազան տեսակ վառելու արժանագին նիւթեր կան. բայց այդպէս մեքենայ բերված է այնտեղ մի քանի տարի առաջ և անգործադիր ընկած է. ի հարկէ շատ մեղադրել չէ կարելի. նախընթաց տարիների վաճառականութեան դրութիւնը վատ էր, ամենայուսալի վաճառահանման նիւթերը իրանց գները սաստիկ փոխեցին. տատանվող ու աստանդական միտքը պէտք է ձեռք խփէր և մեքենաների, ուր չէր կարելի առաջին անգամից և առանց սխալների գործ տեսնել և դժուար էր կարճ միջոցում գիտութիւն ու հմտութիւն ձեռք բերել։

Բացի դրանից մի որ և իցէ մեքենայ Եւրոպայում կարող է շատ օգտակար լինել, իսկ մեր երկրում ոչ. թէև լինէին մեր երկրում նոյնչափ սպառողներ, պահանջողներ։ Դրա պատճառը պէտք է որոնել տնտեսական և քաղաքական պայմանների զանազանութեան մէջ։ Բանը նրանումն է, որ մեքենայի մի և նոյն արդիւնաբերութիւնը այնտեղ աւելի գին ունի քան մեզանում։ Օրինակ. եթէ մի գործիք արժէ 100 ռուբլ, այդ գինը անգլիացու համար կարող է լինել շատ էժան. իսկ հայի համար Հայաստանում ընդհակառակն թանգ։ Անգլիայում այն փայտը, որ գործ է ածված մեքենայ շինելու համար, աւելի թանգ է քան մեզանում. այն վարձը որ տրված է մշակին՝ 3—4 անգամ քանակութեան կողմից աւելի շատ է մերից. — բայց և անգլիացու մեքենայի արդիւնաբերութիւնը ծախվում է համաչափապէս աւելի թանգ մերից։ Եթէ մեր երկրում էլ արդիւնաբերութեան գինը և միւս հանգամանքները նոյնը լինէին, ի հարկէ մեքենան մեզ էլ նոյնչափ օգուտ կը տար։ Ցաւը նրանումն է, որ մենք ինքներս անզօր ենք մեր երկրում, մեր սեփական գործարաններում, մեր առօրեայ գների հաւասարակշռութեան հիման վրա մեքենաներ և գործիքներ պատրաստել և մինչև այժմ էլ ստիպված ենք դառնալ Եւրոպային։ Ընթերցողներից ոչ շատերը տեսած կը լինեն ֆրանսիացիներին, որոնք Կովկասից ընկոյզի փայտ էին գնում մեծ քանակութեամբ և ուղարկում էին Ֆրանսիա։ Այդ փայտը աշխատանքով ծախվում է գործարանին, գործարանը գործիք պատրաստելով աշխատանքով տալիս է վաճառականին և սա դարձեալ իր շահը մէջ տեղ չը մոռանալով ծախում է կրկին կովկասցուն և այդ երկայն շրջանի մէջ փայտի գինը բացառիկ բարձրանում է հինգ կամ տասն անգամ։ — Ի հարկէ խնդիրը ընկուզենում չէ, այլ ամբողջ երևոյթի մէջ։

Այս և սրանց նման ուրիշ պատճառներ ազասում են և արգելում գործիքների բազմանալուն մեզանում, մինչդեռ գործիքների նշանակութիւնը և անհրաժեշտութիւնը օրից օր աւելանում է։ Առանց կատարելագործութիւնների, առանց մեքենաների միջամտութեան մեր նահապետական արդիւնաբերութեան մէջ, մեզ համար կանք չը կայ, մեզ համար վերականգնումն չը կայ մեր տընտեսական թշուառ ու նեղ դրութենից։ Շատ բան է միասին մեզ հարկաւոր. և հմտութիւն ու գիտութիւն և ցանկութիւն ու ձեռնարկութեան ոգի, և հարստութիւն ու զոհերի պատրաստականութիւն... Բոլոր յաջող հանգամանքները միասին մեզ համար անմտացածին և անհասանելի են. զոնէ եղած պայմաններում աշխատենք և գործենք կարելին չափ շրջահայեցողութեամբ։

Մեր գրվածքի ուղիղ նպատակից չեղվեցանք և շատ կանգ առինք մեքենաների վրա. դառնանք մեր խօսքի շարունակութեան։

Այն խնոցին, որ գործ է ածվում կաթնատնտեսական ուսումնարանում միանգամից տանում է 10 պուդ և աւելի սեր, խնոցին ունի մի փոքրիկ ծակ, որ տալիս է կարողութիւն իրաքանչիւր բոպէ նայել սերին և իւղահանութեան։ Իւղը երբ դառնում է ցորենահատի մեծութեան խնոցի մէջ, իսկոյն կանգնեցնում են մեքենան և իւղը ժողովում։ Իւղը առհասարակ ուղարկում են Պետերբուրգ, երբեմն քաղցր, երբեմն աղի։ Մեզանում կարագ իւղը աղած քիչ դեղին գործ ածում. իսկ դա Անգլիայում շատ տարածված է։ — Իւղը ամառը լինում է դեղնագոյն, իսկ ձմեռը սպիտակ։ Դեղին գոյնը, ինչպէս յայտնի է, կախված է կանաչ խոտից. ձմեռը կանաչ խոտ չը կայ և իւղին ամառվայ գեղեցիկ գոյնը տալու համար ներկում են օրինակ գազարի հիւթով կամ օրլեան անուանված ներկով։ Այդ ներկը

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԻ ԱՄԻՍ ԿԱԹՆԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՈՒՄ

V

Ով բացի մեր բնակած երկրից ուրիշ տեղեր չէ եղել՝ դժուար կարող է գաղափար կազմել այն իւղագործական մեքենաների — խնոցիների — վրա, որ այժմ գործ են ածվում Եւրոպայի և Ամերիկայի զանազան մասներում։ Նկարագրել և մանրամասն քննել նրանց՝ ոչ մտադրութիւն և ոչ կարողութիւն ունենք մի այսպիսի լրագրական յօդուածում։ Այն ինչ կարող կը լինենք մեր կողմից — այդ գործիքների առիթով մի քանի միտք յայտնելն է։

Կովկասի և Հայաստանի զանազան մասներում գործ են ածվում զանազան խնոցիներ, սկսած ամենափոքրերից և ամենահասարակներից մինչև փոքր ի շատէ մեծը և կատարելագործվածը։ Ընդրանք այն պահանջներին նայած, որ առհասարակ մեր երկրում կայ, կարելի է ասել այնքան էլ անյարմար չեն. բայց այնու ամենայնիւ աչքի առաջ ունենալով այն կատարելագործութիւնները, որ ուրիշ տեղերում արված են, չէ կարելի ի սրտէ չը ցանկալ, որ և մեր երկրում ընդունէին այս և այն օգտաւէտ գիւրութիւնները կամ յարմարութիւնները։ Մեզանում մեր խնոցիներով չէ կարելի իրաքանչիւր բոպէ՝ առանց գործը ընդհատելու՝ նայել իւղի պատրաստութեան, չէ կարելի ճիշդ որոշել այն կէտը, երբ իւղը արդէն պատրաստ է և ուրեմն խնոցին պէտք է դադարեցնել բոլորովին։ Մեզ համար առանձին մի վնաս չունի, եթէ մենք փոքր ինչ աւելի իւղը կը հարենք. բայց հարկաւոր էլ չէ, որ պատրաստած կարագ իւղը դիմացկուն լինի — իսկ այստեղ բոպէն թանգ են համարում և աւելի խնո-

մայնքից փոխադարձ համերաշխութիւն իր ձեռնարկութեան մէջ։

Եւ մենք կարող ենք հաւատացնել որ գիւղական համայնքը հասկանալով իր սեփական օգուտները, ընդհանրութեան ինտերէսները և տէրութեան շահերը, խղճմտանքով կը կատարի իր յանձն առած գործը, աչքի առաջ կունենայ թէ անտառի պահպանութիւնը, որովհետև այդ իր համար էլ գոյութեան պայման և հացի խնդիր է և մի և նոյն ժամանակ անհամեմատ էժան կը վաճառի փայտ առնողներին։

Պէտք է նախ հասկացնել այդ կէտը գիւղացիներին, — և այդ խնդրի հետ գործնականապէս ծանօթ անձինք վկայում են որ գիւղացին շատ շուտ է ըմբռնում թէ իր և թէ ընդհանրութեան օգուտները, — և ապա պէտք է համայնքից կազմել մի ընդարձակ արդիւնաբեր գիւղական ընկերութիւն, փոխադարձ երաշխաւորութեամբ։

Մենք վերջացնում ենք մեր խօսքը հաւատացնելով որ անտառների կատարեալ ոչնչացնելուց երկրին մեծ վտանգ է սպառնում, եթէ այդ մեր յարուցված խնդրի վրա ուշադրութիւն չը դարձնվի։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Գանձակ, մարտի 4-ին։

Սրա հետ ուղարկում եմ ձեզ եօթանասուն և երկու ռուբլի մի ցուցակի հետ, որը ինձ աջողվեցաւ ստորագրել տալ այստեղի հայ հասարակութեան օգնութեամբ աղքատ էր անձանց յօգուտ Թիւրքիայից գաղթած թշուառ հայ ընտանիքների։ Խոնարհաբար խնդրեմ նեղութիւն յանձն առնէք հասցնել այս փոքր գումարը ըստ պատկանելոյն և եթէ հնար լինի ձեր յարգելի «Մշակ» լրագրի միջոցով հրատարակել նուիրատվոյ և ազգանունները ի գիտութիւն նոցա։

Պետր Իլիչ Գօգչայով 5 ռուբլ, օրիորդ Նինա Գօգչայով 1 ր., օրիորդ Եղիսաբեթ Գօգչայով 1 ր., տիկին Եկատերինէ Ղրիչչենկո (ազգով ռուս) 1 ր., Դաւիթ Օսիպիչ Ցուրինեանց 1 ր., Միքայել Ստեփ. Քամոյեանց 1 ր., Կապետ բէգ Անտոնով 1 ր., Գէորգ Պետ. Օրբելիանով 3 ր., Աղեքսանդր Մէլիք-Շահնազարեանց 5 ր., Գրիգոր Մէլիք-Շահնազարեանց 2 ր., Դաւիթ Մէլիք-Շահնազարեանց 2 ր., Յովհաննէս Տէր-Ղազարեանց 2 ր., Պետրոս Տէր-Դաւթեանց 2 ր., Արտէմ Տէր-դաւթեանց 50 կոպ., Բաղդասար Փարսադանով 2 ռուբլ, Բաբայ Ռուստամեանց 40 կոպ., Դանիէլ Շահնազարեանց 1 ռուբլ, Նիկոլայ Բաղդասարեանց 1 ր., Նիկոլայ Լալայեան 1 ր., Սիմոն Բաղդասարեանց 1 ր., Սիմոն Փոնունց 2 ր., Աւետիս Մէլիք-Շահնազարեանց 2 ր., Բաղդասար Աւագեան 50 կոպէկ, Աւանէս Լալաբէկեանց 50 կ., Գրիգոր Ստեփանեանց 40 կ., Աւանէս Բատիրեանց 40 կ., Ասրի Մէլքումեանց 40 կ., Աւան Գրիգորեանց 2 ռուբլ, Աւագ Յովհաննէսեան 40 կոպէկ, Ս. Ղազար-Բէկեանց 1 ռուբլ, խաչատուր Ապայոմով 1 ր., Համբարձում Դաւթեան 2 ր., Աստուածատուր Տէր-Պետրոսեանց 1 ր., Աթանէս Շահգալտեանց 2 ր., Յակոբ Շատունց 5 ր., Ազազիւլ Գրիգորեանց 1 ր., Աւագիմ Ավլաբեանց 1 ր., Յովակիմ Տէր-Գասպարեանց 1 ր., Պետրոս Սարգսեանց 1 ր., Սոլոմոն Մասխարով (ազգով իմէրէլ) 2 ր., Քերբալայ Ռուստամ Մելատի Իբրահիմ օղլի (Թուրք) 40 կոպէկ, Ալաքբէր հաջի Ղասում օղլի (Թուրք) 40 կ., Տիկին Նազանի Դօլուխանեանց 2 ռուբլ, Աւաքել Վարդապետեանց 5 ր., 70 կոպէկ, Տիկին Նադեժդայ Վարդապետեանց 3 ռուբլ, և փոստի ծախսը՝ Ընդամենը գումարն է 72 ռուբլ։

Նադեժդա Վարդապետեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ԽԱՐԿՕՎԻՑ հաղորդում են մեզ՝ որ փետրվարի 27-ին վախճանվեցաւ Խարկովի դրամատիկական թատրոնի դերասանուհի Ֆանի Կազլովսկայա (Фанни Казловская) որ գրաւել էր նոյն քաղաքի ժողովրդի սիրտը։ Փետրվարի 28-ին երեկոյեան ժամի 5-ին նշանակած էր ննջեցեալի համալսարանական եկեղեցի տանելն. այս միջոցին ճանապարհները՝ որտեղ պէտք է անցկացնէին ննջեցեալը բաղմութեամբ լիքն էր և թատրոնի իտալական երաժիշտները ևս վերջին հրաժարականը տուին՝ ածելով թաղման մարշը. իսկ մարտի 1-ին նոյնպիսի մեծ հանդէսով կատարվեցաւ ննջեցեալի թաղումը։ Ննջեցեալը թողեց երեք որբ երեխաներ՝ որոնց կրթութեան միջոցներ տալու համար այն թատրոնի դերասանների կողմից նշանակած են շարունակ ներկայացումներ։ Զը նայելով որ դերասանուհին ստանում էր 5000 ռուբլ իւրաքանչիւր սեզոնի (сезонъ) համար, ոչինչ կարողութիւն չը թողեց։

—

ԽԱՐԿՕՎԻՑ հաղորդում են՝ որ նշանաւոր գերի Օսման փաշան խնդրել է Սուլթանին, որ իր գերութիւնը վերջանալուց յետոյ թոյլ տայ ճանապարհորդել Մօսկվայ, Պետերբուրգ և ուրիշ եւրոպական մայրաքաղաքներ։

—

ԽԱՐԿՕՎՈՒՄ բնակվող գերմանացիք պատրաստվում են տօնել գերմանական կայսրի ծննդեան տարեդարձը, հասարակական հացկերոյթով, որ լինելու է մարտի 10-ին։

—

Հայ օրիորդ վարվարա Յովհաննիսեան Արդարեանը՝ որի մասին արդէն յիշած էինք «Մշակի» անցեալ տարվայ № 88 խարկովի նամակում՝ որպէս հիւանդապահուհի առաջին կարգի (сестра милосердія 1-го разряда) այժմ լսում ենք՝ որ այնքան ջերմեռանդութեամբ և անձնանվիրութեամբ կատարում էր իր պաշտօնը խարկովի «Կարմիր խաչի» ընկերութեան հիւանդանոցում՝ որ վարակվելով սև ծաղիկ անուանված հիւանդութեամբ, սաստիկ հիւանդ է և բժիշկները կասկածում են նրա առողջանալու մասին։

—

ԽԱՐԿՕՎԻ մանկավարժական ժողովներում յայտնվեցաւ՝ որ այս տարի կը բացվեն խարկովի տեխնոլոգիական ինստիտուտի առաջին դասերը։ Պատմում են որ անցեալ օգոստոսին կը բացվեր, եթէ պատերազմական դրութիւնը չարգելէր։

—

Այս օրերս խմբագրութեան մէջ ստացվեցաւ ԲԱԳՈՒ քաղաքում տպված մի հայերէն բրոշիւր «Հ. Խորէն վարդապետ Ստեփանէն Բագուի մէջ» վերնագրով։ Բրոշիւրը ստորագրված է Հայ կեղծեալ անունով։ Հեղինակը հայր Ստեփանէի, որպէս մանկավարժի բոլոր անընդունակութիւնը և խոշոր պակասութիւնները ցոյց տալուց յետոյ, վերջացնում է իր խօսքը հետևեալ խորհուրդ տալով հայր Խորէնին։ «Թէ անաչառ ընթերցողները ինչպէս կը դատեն, չը գիտեմ, միայն ես անկեղծ խորհուրդ կը տամ հայր Ստեփանէին՝ բոլորովին հեռանալ մանկավարժական ասպարիզից, և ընտրել մշտաշրջիկ քարոզչի պաշտօն, որով դուցէ բաւական օգուտ բերէ։»

—

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ մեզ գրում են։ «Տեղիս աղքատանոցի համակրողների թիւը հետզհետէ աւելանում է։ Նորան օգնելու համար երկու միջոց էր ընտրված՝ մինը, որ հարկ վճարելիս ամեն մարդ ռուբլի վրա 10—15 կոպէկ աղքատանոցին պէտք է տար և երկրորդ որ ցանկացողը կարող էր իր ազատ ընտրութեամբ նուիրել և ժապաւինեալ մատեանի մէջ ստորագրել։ Այս վերջին ձևը շատերը հաւանեցին և այժմ մի քանիսները նուիրում են 40, 50, 100 ռուբլ։»

—

ԱՍՏՐԱԽԱՆԻՑ մեզ հաղորդում են, որ այնտեղի հասարակութիւնը փետրվարին տօնեց Ցարութիւն աւագ քահանայ Ցուրչինեանի 50 ամեայ յոբելեանը։ Աստրախանցիք ստորագրութեամբ հաւաքած 200 ռուբլով մի խաչ գնեցին և ընծայեցին իրանց սիրելի քահանային։ Բացի այս նոքա պարտաւորացրին մի երիտասարդ քահանային վարել ծերունու պաշտօնը և իր եկամուտից ծերունուն մասը տալ։

—

Մեր ԵՐԵՒԱՆԻ նամակագիրը գրում է հետևեալը։ «Շուտով մենք կունենանք Երևանում մի սեփական թատրոնական դահլիճ պատրաստի բեմով։ Օրիորդաց դպրոցի տեսուչ հայր Յովսէփ Մելեանցը դպրոցի դահլիճին աւելացնում է մի չինութիւն, որտեղ բեմը կը լինի։ Դահլիճի տեղը շատ յարմար է, թատրոնական գործը Երևանում կարելի է աջողված համարել։ Տէր հօր վրա այդ գործի պատճառով շատ անտեղի յարձակմունքներ են լինում, բայց հաւատացած ենք, որ նա ուշադրութիւն չի դարձնի և կը վերջացնի իր սկսած գործը։»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՒՍՏՐԻԱ

—

Հեռագիրը լուր բերեց թէ աւստրիական և ունգարական դելեգացիաները որոշել են 60 միլիոն գուլդէնի կրեդիտ անել կառավարութեան։ Այդ որոշումը տալուց առաջ Ան-

---

վնասակար չէ և միայն աչքի վրա լաւ տպաւորութիւն անելու համար է գործ ածվում, որովհետև իւղը այնպէս ճրագուսիւղ է նմանում... Իւղի պուդը Պետերբուրգում ծախվում է 14—16 ռուբլ և աւելի։ Այդ հաշով իւղագործութիւնը տալիս է կարճ միջոցում 20%-ից աւելի աշխատանք։—Եդիմնովի կաթնատնտեսական ուսումնարանում պատրաստվող իւղը այն տեսակին է որ անուանվում է նորմանդեան իւղ, բայց այստեղ, պէտք է ասել, խառնել են մի քանի եղանակներ միասին, այնպէս որ զուտ ոչ մի անուն չէ կարելի տալ։ Եթէ իւղը քաղցր է, սպիտակ բարակ ճոթում փաթաթած և արկղի մէջ դրած ուղարկում են երկաթուղու կայարան. իսկ աղած իւղը լցնում են պատրաստած և աղաջրում պահած փայտեայ տակառներում....

VI

Եթէ Հայաստանի բոլոր քնած ոյժերը դէպի գործունէութիւն կարողանայինք բերել, եթէ մեր երկրի անշարժ կապիտալը կատարեալ շրջանառութեան մէջ դնէինք, եթէ ամեն տեսակ բերքերի արտահանութեան և ներմուծութեան գործի մէջ մեզ օգտաւէտ ուղղութիւն կարողանայինք տալ, եթէ հաղորդակցութեան ճանապարհները կարճացնել և հեշտացնել աշխատէինք — մենք մեր այժմեան թշուառ երկրի փոխարէն ստեղծած կը լինէինք մի հրաշագեղ հարուստ աշխարհ, որ այժմեանի հետ համեմատելով տասն անգամ աւելի ժողովուրդ տասն և հարիւր անգամ աւելի յարմար, աւելի շքեղ, աւելի հարուստ կեանք վարում կը լինէր—մեզ սարսափեցնող միլիարդը բաւականին կընտելանար մեր աչքին ու մտքին, մեզ զարմացնող քաղաքակրթական հրաշքները, մեր ֆիզիքական և մտաւոր ոյժերի տակ կը մանէին և կընտանանային մեզ հետ... Այո, եթէ լինէին, կասէ ընթերցողը. ինչպէս միացնես այդ բոլոր պայմանները միասին և շուտով գործադրես, որտեղից ճարես այդքան ձեռք ու այդքան մատրճ և ինչպէս գործադրես նրանց։—Ցանկարծ և միանգամից մեծ բան ի հարկէ աշխարհումս հեշտ չէ կատարել. բայց հաւատացնում եմ, որ այն, ինչ արդէն մեր կարողութեան տակն է, եթէ այն էլ կատարելու լինէինք, մենք մեր կեանքի մէջ մեծ առաջադիմութիւն արած կը լինէինք, առաջադիմութիւն, որ կարդիւնաբերէր ապագայ զարգացման համար աւելի յարմար և ամենրև պայմաններ։ Մենք ոչ թէ միայն չենք կարողանում նոր ոյժեր յարուցանել, նոր գործ սկսել—այլ և բոլորովին անզօր ենք մեր ունեցածը լաւ գործադրել. մենք բոլորովին ագէտ ենք մեր երկրի ոյժերի վերաբերմամբ....

Արդիւնաբերութեան ինչ ճիւղ կամենում ես վեր առ, ամեն տեղ կարող ես ասել՝ «եթէ այս այսպէս անէի անպատճառ այս կամ այն հետեւանքին կը հասնէի. ցաւը նրանումն է, որ ես կարող եմ իմ ունեցած միջոցներով իմ ցանկացածս իրագործել. բայց չեմ գործում, չեմ աշխատում մինչև անգամ սկսել փորձ.»

Այո, չես աշխատում, որովհետև դու չունես լայն և մեծ ձեռնարկութեան ոգի, որովհետև բոլորովին չես հաւատում, որ համբերութիւն կունենաս գործդ մինչև վերջ տանել, որովհետև քեզ շրջապատող անձերի գործունէութեան ուղղութիւնը բոլորովին ուրիշ է. այսինքն չես տեսնում քո առաջիդ օրինակներ, իսկ ինքդ անձնական ինիցիատիվ չունես։

Ես ասացի ինչ արդիւնաբերութիւն որ վեր առնես, ուրեմն և կաթնատնտեսական արդիւնքների վերաբերութեամբ,—այո, և այստեղ, ինչ ենք անում մենք, ստանում ենք թէ տալիս. արտահանում ենք թէ ներմուծում։—Ցիշեցնում ենք մեր յօդուածի առաջին գլխի թանձրանները և փոխում ենք մեր խօսակցութիւնը։

Հայաստան բարեբեր, Հայաստան արգաւանդող, Հայաստան խոտաւէտ, շատաջուր և այլն, լսում ենք մենք միշտ. և ամեն անգամ կարծես թէ խօսում ենք մի իդէալական աշխարհի վրա, որ չը կայ իրապէս և որի բերրիութիւնը ու խոտառատութիւնը բանաստեղծական դարձվածներ են միայն։ «Դաշտքն ունին զբաղմութիւն խոտոց և զքաջաբերութիւն սերմանաւորաց պտղոց և լեռինքն լի են երէօք կճղակաբաշխիւք և որոճայնովք. նաև զանասունն պաճարս բազմացուցանեն մեծահասակ, քաջամարմինս և յոյրս ցուցանեն համակեալս ի գիրութիւն։» Այդ խօսքերից յետոյ իմացէք, որ Կովկասը՝ փոխանակ ուրիշ տեղ ոչխար և կով ուղարկելու, ինքն է իր գործածութեան համար գնում ուրիշ երկիրներից մսացու ներ և այն էլ դեռ ժողովրդեան մի մասի մսային կերակրի շատ սակաւ գործածութեան ժամանակ։

Կան դաշտեր, կան խոտեր, կան ջրեր, կայ ամեն յարմարութիւն և չը կայ միայն, օգտաւէտ ու խելացի երկրագործութեան և անասնապահութեան։ Նա մանաւանդ որ կայ պահանջ թէ նոյն իսկ երկրում և թէ շրջապատող սահմաններում կամ սրանցից դուրս։ Սև ծովի հիւսիսային ափերից իւրաքանչիւր տարի մեծ քանակութեամբ մսացու եղներ ու կովեր են ուղարկում Կ. Պոլիս և մենք մի և նոյն ծովի միւս ափերում կարծես սպասում ենք մեզ համար էլ դեռ միս ստանալու, չենք մտածում հետևել Օդեսայի և ուրիշ քաղաքների օրինակին։ Իսկ ինքներս ունենք այսպէս օրինակ. 1873 թուականին արտահանված է 64000 ռուբլու կով ու ոչխար. իսկ բերված է կովկաս 194,000-ի չափ։

Ուրիշ երկիրներում մեզ նման չեն. շատ և շատ դժուար դրութեան մէջ նրանք մեզանից աւելի են գործ տեսնում, ամենակերպ միջոցներով նրանք ստիպում են երկիրը արդիւնաբեր դառնալ և նրա ամենայն մի կտորը իրանց օգտաբերութեան ծառայել։ Մենք դեռ, ընդհանրապէս խօսելով, չենք հասել այնպիսի նեղ և անտանելի պայմանների և աւելի հեշտ ճանապարհ ու միջոցներ ունենք մեր ձեռքին մեր վիճակը բարւոքելու։

Մեզանում առհասարակ գործ են ածում առաւելապէս ոչխարի միս, իսկ տաւարի միսը, որ քաղաքներում փոքր ի շատէ տարածված է, կազմում է մի աննշան մասը։ Ռուսաստանում ընդհակառակն ամենագործածականը կովի և հորթի միսն է։ Կովերը օրինակ Մօսկվայի և Պետերբուրգի համար բերվում են հարաւային Ռուսաստանի անապատներից, իսկ հորթեր փոքր ի շատէ մօտիկ տեղերից։ Մօսկվայում զատկութեան երբեմն ծողովվում է մինչև 20,000 հորթ և միջին թւով ծախվում է մսի պուդը 4—5 ռուբլ հաշուելով։ Հորթ մեծացնելը մի առանձին կամ թանգութիւն կամ դժուարութիւն չունի։ Այն կաթից, որ իւղ է հանած, շատ մեծ օգուտով կարելի է խմացնել հորթերին։ Եթէ հաշուենք թէ 20 պուդ անսեր կաթը տալիս է մի պուդ զուտ միս, որ ծախվում է ամենաքիչ 3 ռուբլով, կը տեսնենք, որ մի պուդ անսեր կաթը տալիս է 15 կոպէկ։ Այս աշխատանքն էլ պէտք է աւելացնել անցեալ գլխում յիշած 20%, որովհետև այնտեղ գնահատել էինք միայն իւղը։ Գները վեր են առնված և հաշի ընկած Մօսկվայի համեմատ, որտեղ այդ գները այժմ շատ և շատ անգամ մեծ են։

Արդեօք մենք այդպէս՝ հորթ մեծացնել չենք կարող և կամ կերպ չունենք աւելի հեշտ մի և նոյն հետևանքին հասնել։ Կարող ենք և ունենք։—Ցուսանք, որ երբ մի քանի մարդիկ ձեռք կը խփեն այդ կամ դրանց նման գործերին, մեր ժողովրդի գործնական խելքը իսկոյն կը մբռնի բանի էութիւնը և տեսնելով նիւթական շահ կը շարժի փողը իր տեղից....

Գլխաւորը հորթը չէ. այլ այդ տեսակ մանրամասների ընդհանուր ոգին։ Մինչև անգամ կարող է պատահել, որ մէջ բերվող օրինակները ամենալաւ ապացոյցները չեն լինի մեր դատողութեան. դրանք դարձեալ համանման երևոյթների թւում ընդհանուր լոգիկային ամենևին հակառակ չեն լինի։ Մեզ համար դարձեալ կը մնան ճշմարտութիւններ, որոնք բղխում են իրերի էական յատկութիւններից։ Մեզ համար թանգ են այդ ճշմարտութիւնները և Աստուած տայ մեր օրինակները աւելի պարզեն քան չփոթեն մեր ասելիքը։ Իսկ այդ ճշմարտութիւնների լայն գործադրութեամբ միայն կարելի է սպասել և փոքր ի շատէ լայն ծաւալման տնտեսական ու մտաւոր զարգացման։

(Կը շարունակվի)

դրաշի կոմը երկար բացատրութիւն տվեց դեղեգացիաներին թէ ինչի՞ է խնդրում այդ կրեդիտը։ Անդրաշիի խօսքերը պարզ ցոյց են տալի թէ արևելեան հարցը ինչպիսի ծանր հարց է որը հարկաւոր է վճռել այժմ այնպէս որ էլի չի խանգարվի Եւրոպայի խաղաղութիւնը։ Մենք ծանօթացնում ենք մեր ընթերցողներին Անդրաշիի տված բացատրութեան բովանդակութեան հետ։

«Այժմեան քաղաքական դրութեան մէջ մեր ուշադրութիւնը գրաւում են գլխաւորապէս երկու դէպքեր. խաղաղութեան հիմնական պայմանները և մի եւրոպական կօնգրէսի գումարվելու յոյսը, որը վերջնական կերպով պիտի կարգադրէ պատերազմի հետևանք եղած փոփոխութիւնները։ Ես չեմ ուզում մանրամաս քննել խաղաղութեան հիմնական պայմանները, որովհետև դեռ վաւերական կերպով յայտնված չեն մեզ։ Ես այդ քննութիւնը հարկաւոր չեմ համարում այսօր, երբ կօնգրէսի գումարվելուն քիչ ժամանակ է մնացել։ Մեզ օգտակար չէ երևում մի ճշմարիտ պրօգրամմա կազմել կօնգրէսում լինելու խորհրդակցութիւններից առաջ։ Տէրութիւններից եթէ մինմիայն այնպէս ցոյց տայ որ իր տեսակէտը տարբերվում է միւսներից, կարելի է որ կօնֆերէնցիայի առաջարկութիւնը չիրագործվի հէնց այն րոպէին որ նա կը սկսվի։ Շատ բնական է որ պատերազմի դաշտի վրա եղած կարգադրութիւնների մէջ պատերազմական շահերը նախադաս համարվեն քան թէ քաղաքական շահերը և անկարելի է որ Եւրոպայի և մանաւորապէս մի քանի տէրութիւնների շահերը չը փնտվեն այն բանակցութիւններից որոնց ներկայ չեն գտնվում այդ տէրութիւնները և յաղթողն ու յաղթվողը առանձին են մնում։ Այդպէս է պատահում մանաւանդ երբ եղած կարգադրութիւնները ոչ թէ վերջնական և որոշ են համարվում, այլ յետոյ ընդունելու են վերջնական համաձայնութեան հիմունքներ։

«Հասարակական կարծիքն էլ մի ծայրահեղութենից դէպի միւս ծայրահեղութիւնն է գնում, հիմնվելով հեռագիրների բերած կարճ և հակասական տեղեկութիւնների վրա։ Ես կարծում եմ որ քաղաքական ընդհանուր դրութիւնը այդչափ անհանգստացնող կերպով չի ներկայացվի կօնգրէսում։ Ռուսաստանը մի քանի անգամ յայտնել է թէ իր սուրը մերկացրած է ոչ թէ անձնական նպատակով, այլ արևելեան քրիստոնեաների դրութիւնը բարւոքելու համար։ Մենք էլ պարտաւոր ենք պահանջել որ ոչ մեր և ոչ Եւրոպայի շահերը չը փնտվեն այդ պատերազմի հետևանքներից։ Եւրոպայի իրաւունքը և գլխաւոր շահը պահանջում են որ պատերազմի հետևանքը լինի խաղաղութիւն և ոչ թէ մի այնպիսի դրութիւն որ նոր անկարգութիւնների սերմ ունենայ իր մէջ. որ արևելեան հարցը վճռվի, որչափ կարելի է, գոհացուցիչ կերպով և ոչ թէ եւրոպական հաւասարակշռութիւնը վտանգվի։ Կօնֆերէնցիայի աշխատութիւնը կը լինի այս նկատողութեան հետ համաձայնեցնել եղած պատերազմի հետևանքը և այդ թէ Ռուսաստանի և թէ Եւրոպայի համար շահաւոր է։ Այս բանը կատարեալ իմանալու համար հարկաւոր է գիտենալ թէ Ռուսաստան ինչ ծանր և մեծ աշխատութեան ձեռք է զարկել։ Այդ աշխատութիւնը նմանում է մի խախտված շէնքի կէսը քանդելու այնպէս որ ամբողջն էլ չի վտանգվի և չի քանդվի։ Պղինձը հալեցնում են որ ո և իցէ ձևով մի բան շինեն նրանից։ Արևելքում, ես դեռ տեսնում եմ միայն հալված մետալի որ այրվում է, բայց չեմ տեսնում այն կաղապարը որով պէտք է մի յարմար ձև տալ նրան։ Եթէ Ռուսաստանի և Թիւրքիայի մէջ որոշված պայմանները հաստատապէս ընդունվեն և գործադրվեն, մենք կը գիտենանք միայն թէ Թիւրքիայի մի մասը ինչ կերպարանք կունենայ, բայց չենք գիտենայ թէ միւս մասը ի՞նչ կը լինի։

«Հարցը նրանումն է թէ մինչև որ աստիճան կարելի է փոքրացնել Թիւրքիան, եթէ ուզում ենք որ նա շարունակէ գոյութիւն ունենալ։ Եթէ քրիստոնեայ հպատակների մի մասի դրութիւնը բարւոքվի և ապահովվի նոր կարգադրութիւններով, ի՞նչպէս կարելի է արևելքի այլ քրիստոնեաների դրութիւնն էլ նոյնպէս բարւոքել և ապահովել։ Ի՞նչ երաշխաւորութիւն պիտի տրվի այդ բարեկարգութիւնները գործադրելու Թիւրքիայի այլ մասերում գտնված քրիստոնեաների համար։ Այս հարցերը այնչափ ծանր և այնչափ դժուար են որ ամբողջ Եւրոպայի համաձայնութեամբ միայն կարելի է վճռել։ Եթէ մի տէրութիւն ուզենայ այս բոլոր հարցերը իր կամքի համեմատ միայն կարգադրել այդ տէրութիւնը պէտք է որ կարողանայ իր յոյսը դնել Եւրոպայի մնացած մասի դէմ կազմված մի դաշնակցութեան վրա. բայց այդպիսի դաշնակցութիւն չը կայ։

«Ռուսաստան ոչ մի կերպով մերժած չէ 56-ի դաշնադրութիւնը ստորագրող տէրութիւնների իրաւունքը և իր շահն էլ չի պահանջի որ իր արիւնը թափված լինի այն բաների համար որոնց տեղութիւնը չի երաշխաւորվի և որոնք Եւրոպան չը կամենայ վաւերացնել։ Այս բոլոր պատճառներով կարելի է յուսալ որ մեծ տէրութիւնները կը համաձայնվին։ Այս յուսով է որ աւստրօ-ունգարական կառավարութիւնը կը ներկայանայ կօնգրէսում։ Նա իր պարտաւորութիւն է համարում աշխատել խաղաղութիւնը պահպանելու և մի և նոյն ժամանակ ազգու կերպով պաշտպանել Աւստրօ-Ունգարիայի մանաւոր և Եւրոպայի ընդհանուր շահերը։ Մենք սկզբից յայտնած ենք որ իրաւունք ունենք մեր շահերը պաշտպանել խաղաղութեան վերջին կարգադրութիւնը եղած ժամանակ։ Կառավարութիւնը, համաձայն այդ քաղաքականութեան, մինչև այժմ չէ դիմել ժողովրդի ներկայացուցիչներին և չէ խնդրել նրա անձնուիրութիւնը։ Այնու ամենայնիւ, մի երկրի կառավարութիւն որ այնչափ մեծ շահեր ունի այդ հարցերի մէջ, չէ կարող իր բոլոր հաշիւները պարզապէս յոյսերի վրա դնել։ Մենք խաղաղութեան հաստատվելու րոպէին պահեցինք մեր աշխատութիւնը, հարկաւոր էր այդ րոպէի համար ամրոցել և կենտրոնացնել տէրութեան բոլոր ոյժերը։

«Կառավարութիւնը դիմում է այսօր ժողովրդի ներկայացուցիչներին այն զգացումով թէ իր պարտաւորութիւնն է ապահովել պետութեան շահերը որ և իցէ յանկարծական պատահարի դէմ և թէ պէտք չէ դիպլոմատիական փաստաբանութիւնների վրա միայն յոյս դնել այնպիսի րոպէում որ շահ ունեցող ամեն տէրութիւններ ոտքից մինչև գլուխ զինաւորված են երևում։ Մենք չենք ուզում այսօր մեր զօրքերը մոբիլիզացիայի մէջ դնել. մենք ուզում ենք միայն այն դրութեան մէջ լինել որ հարկաւոր դէպքում կարողանանք պէտք եղածը անել։ Մեր այս առաջարկութեան մէջ թշնամական խորհուրդ չը կայ այս կամ այն տէրութեան դէմ։ Նոյնպէս մեր նպատակը դատարկ և ունայն մի ցոյց անել չէ, այլ պարզապէս մի զգուշութիւն է որ և իցէ պատահականութեան դէմ և մի ապացոյց է թէ կառավարութիւնը աշխատում է պաշտպանել Եւրոպայի շահերը Եւրոպայի գործակցութեամբ, իսկ աւստրօ-ունգարական շահերը Աւստրիայի սեփական միջոցներով։ Կառավարութեան համար վստահութեան քուէ չէ այս կրեդիտը որ խնդրում եմ ձեզանից. մի այնպիսի կրեդիտ է դա որ դեղեգացիաները ոչ թէ այժմեան մինիստրներին տված կը լինեն, այլ հարկաւոր է տալ որ և իցէ կառավարութեան, որից խնդրում են երաշխաւորել այժմեան դէպքերում երկրի շահերի պահպանվելը։

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

—

Կ. Պոլիս, 8 մարտ 178

Երեկ Խրիմեան հայրիկ մեկնեցաւ գնաց Կ. Պոլսէն դէպի Եւրոպա։ Թէ ինչ նպատակով գնացած է հայրիկը, որոշ չը գիտենք. գուցէ մի քիչ տկարութիւն ունենալով, օդափոխութեան համար գնացած լինի։ Իր հետ ունի քաջ լեզուագէտ և ազգասէր երիտասարդներ թարգմանութեան պաշտօնով։

Այստեղ ազգային զգացումը շատ ոգևորված է այժմ. ամեն հայ կը զգայ թէ հայրենիքի փրկութեան ժամը հնչած է և թէ պէտք է գործել։ Կուսակցական ոգիները լռած են և Հայաստանի ոգին է որ կը խօսի միայն։ Սրբազան Ներսէս պատրիարքը իր ազգասիրական եռանդով և գործունէութեամբ մոռցնել տուաւ իր բոլոր անցեալ սխալները և ամեն կուսակցութեան ալ սիրելի եղած է այժմ։ Մեծ. Ստեփան էֆ. Փափազեան որ քիչ ժամանակ յառաջ գայթակղութեան քար եղած էր իր հակառակորդներու առջև, այժմ ամենուն համակրութիւնը կը վայելէ իբրև գործող և եռանդուն հայ։ Մենք մեծ յոյս ունենք թէ այսպիսի տագնապի ժամանակ որ հայ ազգի մահուան և կեանքի խնդիրը կը յուզվի, Էջմիածնի Վեհափառ Կաթողիկոսը զմեզ չը մոռնար։ Նա անտարբեր չը մնար Թիւրքիահպատակ իւր միլիոնաւոր որդոց ձայնին և իւր բարձր ազդեցութիւնը կը գործադրէ, դիմելով ուր որ յարմար է և հարկաւոր է, որպէս զի Հայաստան ազատուի Թիւրքաց հարստահարող լուծէն և իւր օրինաւոր և պատուաւոր կառավարութիւնը ունենայ։ Մեծ մարդերը պէտք է որ մեծ գործեր տեսնեն։ Վեհափառ Կաթողիկոսը որ շատ լաւ կիմանայ իւր պաշտօնի մեծութիւնը, յոյս ունենք որ այժմ զբաղուած կը լինի մեծ գործերի վրա մտածելով և իւր գործունէութիւն որչափ ալ դաղտնի լինի մեզ համար առ այժմ, ապագային մի փառաւոր անուն կը թողու իւր ետևէն։ Մենք այս յոյսերը կը մտածենք մեր մէջ իրաւամբ, որովհետև կը մտածենք թէ ազգին ծառայել ուզողին և պաշտօն ունեցողին համար ինչ աւելի յարմար բոպէ կայ քան թէ այժմ։

Ռուսերը եւրոպական Թիւրքիայի մէջ հայերին հետ շատ լաւ կը վարուին։ Ադրիանուպոլի մէջ մեծ պաշտօններ հայոց յանձնեցին և շատ աւելի սէր և համակրութիւն ցոյց կը տան հայերուն քան թէ յոյներուն։

Նիկոլայ մեծ դուքսը կը բնակի Այ-Ստեֆանոս Ցատեանները։ տունը և յայտնի է որ Ցատեան գերդաստանը շատ լաւ գիտէ թէ ինչպէս հարկաւոր է հիւրընկալել կայսերական իշխաններ և ազգի պատիւը բարձրացնել նոցա մօտ։

Տեղական «Levant Herald» լրագրին մէջ մի նամակ էր հրատարակուած, Էրզրումի իւր թղթակցէն գրուած։ Թղթակիցը կը գանգատի թէ ռուսերը Հայաստանի մէջ շատ տմարդութեամբ կը վարուին հայերուն հետ. բայց ազգային թերթերը հերքեցին «Levant Herald»-ի այդ լուրը։ »Թերճիմանը Էֆքեար» լրագիրը բացարձակապէս հաստատեց թէ ռուսերը հայոց հետ շատ լաւ կը վարուին Թիւրքական Հայաստանի մէջ։

Հ.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Ասում են թէ վախճանած իշխան Չերկասկու տեղ Բուլգարիայի կառավարիչ կը լինի գեներալ Իգնատիեվի եղբայր կոմս Իգնատիէվ։ Յայտնի է որ իր պաշտօնը կը տևէ մինչև Բուլգարիայի իշխանի ընտրվելը։

—Բուլգարիայի իշխանութեան համար առ այժմ երկու կանդիդատների անունն է լսվում։ Մինն է իշխան Լուի դը Բատէնբերգ, 24 տարեկան, գերմանացի հօր կողմից որ Հէսսէնի իշխանն է, լեհացի մօր կողմից և ազգական Ռուսաստանի Կայսրուհուն և Անգլիայի Ալիս իշխանուհուն։ Միւս կանդիդատն է Կ. Պոլսում գերմանական դեսպան Բէյս իշխանը որ դեսպանական պաշտօն վարած է նաև Ս. Պետերբուրգում։ Բէյս իշխանը ծնած է 1825-ին, Սաքսէն-Վէյմարի մեծ դուքսի փեսան է և իր կնոջ մօր կողմից ազգական է Ռուսաստանի Կայսերական գերդաստանին։

—Աթէնքից եկած լուրերին նայելով, ապստամբութիւնը հետզհետէ տարածվում է Յունաստանի սահմանակից Թիւրքական նահանգներում և ապստամբները մեծ յաղթութիւններ են անում։ Բ. Դուռը հետզհետէ զօրքեր է ուղարկում որ ապստամբներին հանդարտեցնէ, բայց չէ աջողվում։

—Աթէնքից գրում են մարտի 1/13-ին թէ Ամերիկայի նախկին նախագահ գեներալ Գրանտ հասել է Աթէնք և այցելութիւն է արել Գէորգ թագաւորին։ Աթէնքից գնացել է Նապոլի։

—Կ. Պոլսից հեռագրում են «Kölnische Zeitung» լրագրին թէ մեծ յուզում կայ Սիրիայում։ Սիրիացիները կամենում են որ իրանց երկիրը ազատվի օսմանեան լծից և միանայ Եգիպտոսի հետ։

—Բուլգարիայի հարաւ-արևմտեան մի քանի նահանգներում, և մասնաւորապէս Տիմոկի ձորում, բուլգարները սպառնական ցոյցեր են արել սերբիացիների դէմ, որովհետև սրանք տուրք են պահանջել այդտեղի բնակիչներից։ Ռուսները այդպէս չը վարվեցան բուլգարների հետ։

—Տրիէստից հեռագրում են մարտի 9-ին (փետրվ. 25) թէ աւստրիական «Լլոյդ» ընկերութեան Սֆինքս չոգենաւը 2500 չէրքէսներով Կավալայից դալիս այրվել է և Ելեա հրուանդանի մօտ ընկղմվել է։ 500 մարդ մեռել են։

—Կիլիկիայի Ադանա նահանգում կենդանիների մէջ տարափոխիկ ախտ տարածված լինելով, Բ. Դուռը արգելել է այդ նահանգից կենդանիներ տանել ուրիշ տեղ։

—Լրագիրները հաղորդում են որ Թիւրքաց սուլթանը հրամայել է նշանակել Թիւրք հիւպատոսներ Բաթում և Ղարս քաղաքներում։

—Լրագիրները հաղորդում են մարտի 9-ից, որ Վիլհելմ կայսրը բարեկամական կերպով պատասխան գրեց պապի նամակին։ Կայսրը համաձայնութիւն է յայտնում խաղաղութեամբ վերջացնել բանը, և թոյլ է տալի որ առաջ ինքն պապը ներկայացնէ իր առաջարկութիւնները։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ԼՕՆԴՕՆ, 1 ապրիլի (20 մարտի)։ Անգլիական համայնքների խորհրդի նիստում Հարդի ներկայացրեց թագուհու հրամանը անյապաղ զէնքի կանչել պաշարի զօրքերը և միլիցիան հաւաքել։ Լօրդ Գրէնվիլ և մարկիզ Հարթինգտոն ապրիլի 3-ին (մարտի 22-ին) կընդունեն ամբողջ Անգլիայի ազատամիտ ընկերութիւնների պատգամաւորներին Բրայտոնի առաջնորդութեամբ, որոնք յայտնվում են յօգուտ խաղաղութեան պահպանելուն։

ԲԷԼԳՐԱԴ, 1 ապրիլի (20 մարտի)։ Խորվատաւվիչ ներկայացրեց իր հրաժարականը։

Կ. ՊՕԼԻՍ։ Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլայեվիչ երեկ ներկայ գտնվեցաւ գերմանական դեսպանի որդու մկրտութեան հանդիսին։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, մարտի 22-ին։ Այս բոպէիս հասաւ Ս. Պետերբուրգ կոմս Իգնատիեվ։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, մարտի 22-ին։ Պետական բանկի 5% տոմակը առաջին շրջանի արժէ 95 ր. 50 կ., երկրորդ 95 ր., երրորդ 95 ր., չորրորդ 94 ր. 75 կ., ներքին առաջին 5% փոխառութեան տոմակը արժէ 221 ր., երկրորդը 220 ր. 37 կ., ոսկի 8 ր. 46 կոպէկ։ Լօնդոնի վրա ռուսաց ռուբլը արժէ 23¹/₃ պէնս, Գերմանիայի վրա ռուսաց 100 ռուբլ արժէ 201 մարկ, Փարիզի վրա 247 ֆրանկ։ Տրամադրութիւնը թուլանում է։

ՎԻԵՆՆԱ, 21 մարտի (ապրիլի 2)։ Ռուսաց զօրքերը ուղևորվեցին դէպի Գալիպոլի։ Թիւրքաց գերիների վերադարձնելը յետաձգված է։ Թիւրքերը ամրացնում են Բուիւկդիրէն։ Ամեն օր Սան-Ստեֆանո գալիս են ռուսաց շոգենաւներ պաշարի մեծ բեռներով։ Ռուսաց բոլոր զօրքերը, որոնք գտնվում էին Բալկանեան սարերի հիւսիսային կողմը, մօտենում են Դունայ գետին նոր ամրոցներ շինելով և հիները ամրացնելով։ Սոֆիայում նոյնպէս հաւաքված են ռուսաց զօրքերը մեծ քանակութեամբ, դրանք էլ տանվում են Բալկանեան սարերի հարաւային կողմը։

ԼՕՆԴՕՆ, 21 մարտի (ապրիլի 2)։ Տպված է թագուհու հրամանը, որ պահեստի բոլոր զօրքերը մինչև ապրիլի 19 հաւաքվին այն տեղերը, որ նշանակել է պատերազմական մինիստրը։ Լուր կայ, իբր թէ կոմս Բէյստ ուղևորվել է Վիէննա։ Այսօր թագուհու մօտ մինիստրների խորհուրդ կայ։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Կառավարութեան թոյլատրութեամբ այս փետրվար ամսի 18-ից բացվեցաւ ԹԻՖԼԻՍՈՒՄ, Միքայէլեան կամուրջի վրա, Միրզոեվի տանը № 1, 2, նոր գրախանութ «ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑ» (Центральная книжная торговля) անունով։ Գրախանութում վաճառվելու են ամենատեսակ դասագրքեր հայերէն, ռուսերէն և ուրիշ լեզուներով. նոյնպէս լինելու է մեծ ընտրութիւն ընթերցանութեան գրքերի։ ԳՐԱԽԱՆՈՒԹԸ նպատակ ունի իր ճշտութեամբ և ձեռնտու վաճառմամբ նպաստել կրթութեան գործին, մասնաւորապէս մեր հայ ուսումնասիրներին։ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ կը ծախվին նմանապէս տեղական պարբերական թերթերը։ Պաուէրները կը կատարվին ամենայն արագութեամբ։ Անիծող պաուէրները, մանաւանդ անծանօթ տեղերից, անկատար կը մնան։ Օտար քաղաքացիք կարող են դիմել այս հասցէով Тифлисъ «Центральная книжная торговля Михайловскій Мостъ, домъ Мирзоева № 1, 2։

ԵՂԲԱՐՔ Ն. Գ. ՏԷՐ-ՂԵՒՈՆԴԵԱՆ
Ս. ՏԷՐ-ԻՍՐԱՅԷԼԵԱՆ

9—10

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻՑ ՆՈՐ ՍՏԱՑՎԵԼ են ՊԱՐՏԻԶԻ ԲՈՅՍԵՐԻ ԵՒ ԾԱՂԻԿՆԵՐԻ ՍԵՐՄԵՐ, որոնք ծախվում են Կովկասեան գիւղատնտեսական ընկերութեան կոմիսիոներ Լարշէի դէպօում, որ գտնվում է Գօրօվինսկի պրոսպեկտի վրա № 11։

9—10

ՊԵՐՃ ՊՈՒՇԵԱՆՑԸ խնդրում է իր «ԿՈՒՍԱԾԱՂԻԿ» վիպասանութեան գործակալներին շտապել բաժանորդագրութիւնները ուղարկելու մինչև ապրիլի մէկն։ Գրքի տպագրութիւնը վերջանում է և ստորագրողաց անունները պէտք է տպվեն գրքի վերջին։

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ, որ ուսում է առելֆարիզում, ցանկանում է տալ ՖՐԱՆՍԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ ԴԱՍԵՐ։ Կարող է նոյնպէս ՐԵՊԵՏԻՏՈՐԻ ՊԱՇՏՕՆ վարել։ Հասցէն կարելի է իմանալ «ՄՇԱԿԻ» Խմբագրատանը։

1—10

ՄԻ ՕՐԻՈՐԴ, որ խօսում է ՌՈՒՍԵՐԷՆ ԵՒ ԵՒՐՕՊԱԿԱՆ լեզուներով—կարող է նոյնպէս դասեր տալ—առաջարկում է իր ծառայութիւնները ուղղակի ԿԱՆԱՆՑ ԿԱՄ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ, ՈՐՈՆՔ ԱՄԱՌԸ ԹԻՖԼԻՍԻՑ ԴՈՒՐՍ ԵՆ ԳՆՈՒՄ։ Հասցէն պէտք է թողնել «Մշակի» Խմբագրատանը։

1—3

Թիֆլիսից տեղափոխվելու պատճառով **ՇԱՏ ԷԺԱՆ ԳՆՈՎ** վաճառվ են տրվում ԵՐԿՈՒ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐ, որոնցից մէկը 7 սենեակից է բաղկացած, իսկ միւսը 27։ Բնակարանները գտնվում են Վօրոնցովսկայա Նաբերեժնայա փողոցի վրա և ունեն մեծ բակ, սարայ և բոլոր տնտեսական յարմարութիւններ։ Պայմանները կարելի է իմանալ Վօրոնցովսկայա Նաբերեժնայա փողոցի վրա, Նէյմանի տանը 12—5 ժամ ամեն օր։ ՊԷՏՔ է ՀԱՐՑՆԵԼ ԻՎԱՆ ԱՆՏՕՆՕՎԻՉ ՋԵՄԲԵՐԳԻՆ։

1—3 (2)

Թիֆլիսի Քաղաքային Վարչութիւնը յայտնում է, որ մարտի 24-ին Վարչութեան ներկայութեամբ կը լինի աճուրդ առանց կրկնաճուրդի կապալով տալու 100 քառ. սաժէն հողը, որ գտնվում է Նաւթլուխում, նոր շինվող սպանդանոցի մօտ, խմիչքների և ուտելիքի խանութ շինելու համար։

Թիֆլիսի Քաղաքային Վարչութիւնը յայտնում է, որ Վարչութեան ներկայութեամբ մարտի 24-ին նշանակած է աճուրդ առանց կրկնաճուրդի Նաւթլուխում գտնված 194 դեսեատին 1 100 քառ. սաժէն հողը, կապալով տալու համար։ Այդ հողը արօտատեղի համար պիտանի է։

Զաք. Գրիգորեանցի գրավաճառանոցը ստացաւ պ. Ց. ՔԻՒՐՔՉԵԱՆՑԻ աշխատասիրած լուսանկարները՝

1. Էջմիածնի զանգակատունը միաբանաց խուցերով. . . 1 ր. 30 կ.
2. Ալէքսանդրօպոլ քաղաքի հարաւային ընդհանուր տեսարանը. 1 » 15 »
3. Холмъ-чести (Ալէքսանդրօպոլի մօտ մի բլուրի վրա թաղված ռուս ասպիճանաւորների գերեզմանատունը 1 » 20 »
4. Մի և նոյնը—փոքր դիրքով . . . . . 1 » 15 »
5. Էջմիածին . . . . . — » 40 »
6. Էջմիածնի զանգակատունը իր սրահներով—միաբանաց խուցերով . . . . . — » 40 »
7. » Զանգակատունը . . . . — » 40 »
8. » Վեհարանի հին դահլիճը . . . — » 40 »
9. » » նոր դահլիճը . . . — » 40 »
10. Ներսիսեան լիճը հանդերձ Էջմիածնի վանքով . . . — » 40 »
11. » անտառը—սօսենիք. . . . . — » 40 »
12. » » —ծիրանենիք . . . . . — » 40 »
13. Ցունական տառերով հին խաչակներ (կապիտէլ) որք դուրս են բերված Էջմիածնի պարսպաներսի գետնի տակից . . — » 40 »
14. Հռիփսիմէի վանքն իր մարտկոցներով ամրացած հին պարսպով . . . . . — » 40 »
15. Գէորգեան նորակառոյց ճեմարանը . . . . . — » 40 »
16. » » ննջարանը . . . . . — » 40 »
17. » » սեղանատունը . . . . . — » 40 »

Այս պատկերների գները նշանակած են առանց ճանապարհի ծախսի։

16-ն մարտի 1878 թ. 1—3

„ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԹԵՐԹ“

ԸՍՏԱԳԻՐ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՎԻ ԱՊՐԻԼ ԱՄՍԻՑ 1878 Թ. ՀԵՏԵՒԵԱԼ ՊՐՕԳՐԱՄՄԱՅՈՎ

Ա. Դպրոցական խնդրի և ազգային դաստիարակութեան վերաբերեալ առաջնորդող յօդուածներ։ Դպրոցական գործի ներկայ դրութիւնը մեր մէջ։ Սկզբնական ուսումնարաններ ազգայոց և օրիորդաց։ Մանկավարժական բովանդակութիւն ունեցող յօդուածներ։

Բ. Ուսումնարաններին վերաբերեալ տնօրէնութիւններ կառավարութեան և զանազան վարչութիւնների կողմից

Գ. Մատենախօսութիւն և կրիտիկա դասական գրեանց և մանկավարժական շարադրութիւնների։

Դ. Երևելի մանկավարժների կենսագրութիւններ և մանկավարժութեան պատմութեան վերաբերեալ յօդուածներ։

Ե. Այլ և այլք։—Թղթակցութիւններ։ Մանկավարժական ընկերութիւնների, խորհուրդների և ժողովների օրագրութիւնները։

Զ. Ցայտարարութիւններ մատենագրութեան և առ հասարակ ուսումնարանական գործին վերաբերեալ։

Այս գործի մէջ մեզ ընկեր և մշտական աշխատակից կը լինի պ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԳԻԱՆԵԱՆՑ, աւագ Յովնանեան օրիորդաց ուսումնարանի։ Կաշխատակցեն մեզ նոյնպէս մեր ուսումնարանական գործի մէջ յայտնի փորձառու գործող անձինք։

Տարեկան 12 գրքոյկ, իւրաքանչիւրը 4—6 թերթ (64—96 եր.)։ Տարեկան գինն է 6 ռուբլ ամենայն տեղ։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ Редакція Армянскаго журнала Педагогическій Листокъ. Сололаки Садовая улица д. № 42.

Քաղաքիս մէջ ստորագրուել կարելի է պ. Ե. Ծատուրեանցի խանութում «Դվօրցովի խաղողուս», պ. Զ. Գրիգորեանցի և պ. Տէր-Ղևոնդեանցի գրավաճառանոցներում։

Խմբագիր և Տնօրէն ՅԱԿՈԲ ՏԷՐ-ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ՄԱՐՏԻ 23. ՏԵՂԵԿԱՑՈՒՑ ԹԻՖԼԻՍ 1878.

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ (Մարտի 22-ին)

	Ր.	Կ.
Ոսկին (պոլումպերիալը)	8	30
Հին 82 պր. մ. արծ. 1000 մ.	1500	—
Հին 20 կ. 72 պր. 1000 »	1250	—
Վիգրիչնի 5% առաջի փոխառութեան տոմ. 100 »	233	—
Երկրորդ 5% վիգրիչնի »	235	—
Մարսելի կուրսը 265—	258	—
Լօնդօնի կուրսը Օդեսայի վրա.	9	60
Վենայի կուրսը ածէ 112 գ.	100	—
Դաւրեժի բարաթը. . .	5	60
Առևտրական բանկի ակցիան 200 մ. . . .		
Փօթի Թիֆլիսեան երկաթուղու ակցիան 125 մ.	125	—
Շաքարը բրօցկու . .	8	20
» միւս տեսակը.	8	—
» չաքարաւազը .	5	80
» տրանզիտը. .	6	50
» մաքսը վճարած	12	50
Բամբակը Երևանու Ամերիկայի սերմից. . .	8	—
Միւս տեսակը հին սերմից.	7	50
Բուրդը թուշի . . .	7	20
» թարաքամի .	4	20
Ալիւր Շորագալու . .	2	—
» Երևանի. . . .	—	—
Գարին.	1	40
Մոմը բնաճարպի (стеар.)	13	40
Մետաքս Նուխվայ . .	180	—
Կախեթունը. . . .	100	—
Կոկոնը Նուխվայ (բոժ.)	45	—
Ֆրիզոնը (լասը) Ագուլեաց	50	—
Կոֆէն մօկօի. . . .	30	—
» լիվանի . . .	—	—
» մարտինկօյինը	18	—

ՀԵՌԱԳԻՐ

	Ր.	Կ.
Կովկասի և Անդրկովկասի քաղաքները . . .	1	
Ռուսաստան .	2	
Աւստրիա . .	3	
Անգլիա. .	4	
Գերմանիա. . .	2	88
Ֆրանսիա . . .	3	75

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՄԱՆԿԱԲԱՐՁԱԿԱՆ ԴՊՐՈՑ

(Վէրայի վրա № 38)

Ծննդականների ընդունելութիւնը ցերեկվայ և գիշերվայ ամեն ժամանակ, օրը 50 կոպէկ վարձով, իսկ չքաւորներին անվարձ։ Առանձին սենեակներում ամիսը 30—50 ռուբլ։ Կանանց հիւանդութիւնների բաժանմունքի մէջ վարձը ընդհանուր սենեակում 18 ռուբլ, իսկ մասնաւոր սենեակներում 30 ռուբլ ամսական։

Երթևեկ հիւանդ կանանց և երեխաների ընդունելութիւնը ամեն օր, բացի կիրակի օրերից, 9½ մինչև 11 ժամ առաւօտեան։ Բժշկապետ Անանով.

ԹՕԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Թիֆլիսից մինչև Փօթի (ճանապարհորդների գնացքը) 9 ժամին 21 րօպէ առաւօտեան։ Մինչև Միխայլօվօ (խառն գնացքը) երեկոյեան 5 ժամ. 18 րօպէ։

	առաւօտ.	երեկոյեան
Թիֆլիսից . .	9. 21	5. 18
Գօրի . . .	11. 58	9. 43
Միխայլօվօ.	1. 29	11. 57
Ռիօն . . .	6. 47	
Փօթի . . .	9. 40	

	առաւօտ.
Փօթիից . .	9. 13
Ռիօն . . .	12. 13
Միխայլօվօ. .	5. 39
Գօրի. . . .	7. 5
Թիֆլիս. . .	9. 31

	1	37
	4	8
	7	56

Թիֆլիս գալիս է առաջին գընացքը երեկոյեան 9 ժ. 31 ր. երկրորդը՝ առաւօտեան 7 ժ. 56 ր.

Տեղերի գինը՝ Թիֆլիսից

	I կլաս.	II կլ.	III կլ.
Մցխէթ .	90	68	38
Գօրի. . .	3. 20	2. 40	1. 33
Սուրամ.	5. 22	3. 92	2. 18
Ռիօն. . .	9.	6. 75	3. 75
Փօթի . .	13. 1	9. 75	5. 42

ՓՕՍՏ

Ամեն տեսակ թէ նամակներ, թէ լրագիրներ և թէ ծանր փօստ ամեն տեղ ուղարկելու, ընդունվում են ամեն օր, առաւօտեան 8 ժամից մինչև 1 և կէսօրից յետոյ 3 ժամից մինչև 7։ Իսկ կիրակի օրերը հասարակ նամակներ մինչև 10 ժամ առաւօտեան և 3—7 երեկոյեան։

Ռուսաստանից և Արտասահմանից փօստը ստացվում է Թիֆլիսում ամեն օր։ Բագուի տրակտից՝ երեքշաբթի և շաբաթ։ Երևանի տրակտից՝ երկուշաբթի, հինգշաբթի և շաբաթ։ Փօթի-Թիֆլիսեան երկաթուղուց ամեն օր։ Նուխու տրակտից՝ չորեքշաբթի և կիրակի։ Բելիկլիսէի տրակտից՝ երեքշաբթի և շաբաթ։

ՆԱՄԱԿՆԵՐ	Կոպ.
Բաց նամակը արժէ .	4
Ռուսաստան և Եւրօպայի բոլոր երկիրները նամակը արժէ	8
Ամերիկա	8
Պարսկաստան . . .	8
Հնդկաստան . .	70
Եգիպտոս	27

ԲԺՇԿԱՆՈՑ

Հիւանդների ընդունելութիւնը առաւօտ 9 ժամից մինչև 1 կէսօրից յետոյ։

Երկուշաբթի. Վէրմիշէվ և Գօրալեվիչ ներքին հիւանդութիւններ, Քուշարեանց վիրաբուժական և ականջի հ. Սօկօլով երեխաների և ներքին հ.։

Երեքշաբթի. Վէրմիշէվ ներքին հ. Ռէյս աչքի հ. Ա. Բախուտով, կանանց, երեխաների հ. և մանկաբարձութեան, Բակստ սիֆիլիտական և կաշու հ.

Չորեքշաբթի. Վէրմիշէվ ներքին հ. Դուբէլիր կրծքային և երեխաների հ. Բակստ կրծքային և ջղային Սօկօլով վիրաբուժական հ.

Հինգշաբթի. Վէրմիշէվ ներքին հ. Կ. Բախուտով, կանանց և ջղային հ. Բակստ վենէրական և կաշու հ.

Ուրբաթ. Վէրմիշէվ ներքին հ. Բախուտով մանկաբարձութեան, կանանց և երեխաների հ. Քուշարեանց սիֆիլիտական և միզային գործարանների հ.

Շաբաթ. Վէրմիշէվ ներքին հ. Դուբէլիր երեխաների և կրծքային հ. Ռէյս աչքերի հ. Բակստ կրծքային և ջղային հ. Սօկօլով վիրաբուժական հ.

«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—ԲԱԳՈՒ. Ս. Գ. Ձեր նամակը այդ լրագրի վերաբերութեամբ, ինչպէս և ուրիշները, չենք տպի։ Մեր լրագրի էջերը աւելի պիտանի յօդուածների համար են, որոնք չաբաթներով հերթի են սպասում։

—ՎԼԱԴԻԿԱՎԿԱԶ. Գ. Տ. Նամակը չենք տպի։ Միթէ արժէ մի անարժան քահանայի պատճառով ամբողջ էջերը լցնել։ Գրեցէք ուրիշ հարցերի վրա, ձեր ոճը վատ չէ։ Առհասարակ ամենահետաքրքիր նամակները նրանք են, որ շատ լուրեր են հաղորդում։

—ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼ. Մ. Մ. Ձեր նամակից լուր քաղեցինք. չարունակեցէք գրել։ Այս նամակը դեռ չենք կարդացել։

—ԹԻՖԼԻՍ. Մ. Ի. Ինչ անենք. քանի մի օր է որ Ռուսաստանի փօստը չէ գալիս և լրագիրները չեն ստացվում։

Дозволено Цензурою 22 Марта 1878 г. Тифлисъ. Типографія Мартиросіанца Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՔՐՈՒՆԻ